# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

աձ Արթուր Մուշեղյան-ն ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | հաց | հաց | աձ Արթուր Մուշեղյան | Մատակարարը պատք է մանկապարտեզի տնօրենին ներկայացնի ավտոմեքենայի և վարորդի սանիտարական գրքույկները: "Տեսակը` «Մատնաքաշ»: Ցորենի բարձր տեսակի և ցորենի 1-ին տեսակի ալյուրի խառնուրդից պատրաստված, ՀՍՏ 31-99 կամ համարժեք: Փաթեթավորումը` հացի երկարությունից կամ լայնությունից ավելի մեծ թղթե կամ պոլիէթիլենային տոպրակով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը` ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը` դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011),Եվրասիական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մակնշումը` ընթեռնելի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Մատակարարումն իրականացվում է ամեն աշխատանքային օր ժամը համաձայնեցնել պարտեզների հետ: Հացի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 50 րոպե: Ընդունել ի գիտություն, մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական անձնագրեր: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին` |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: " Պայմանագիրը կկնքվի միայն հացաարտադրության սերտիֆիկատի , փոխադրամիջոցի և առաքիչի սանիտարական գրքույկների առկայության դեպքում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ած Արթուր Մուշեղյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/07 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 9 | | | | |